ՆԱԽԱԳԻԾ

Լրամշակված

Կ-**259**-14.08.2019-ՏՏԳԲ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 4-ի ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածի 9-րդ և 10-րդ պարբերություններն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենսգրքի 30.1-րդ հոդվածի ~~1-ին մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:~~ `

1) 1-ին մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
2) 4-րդ մասի ««ե» ենթակետով» բառերը փոխարինել ««զ» ենթակետով» բառերով:

Հոդված 6. Օրենսգրքի 33-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

~~2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~

~~«Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու նպատակով ջրօգտագործման թույլտվության համար դիմած անձին (անկախ տվյալ տարածքում ջրավազանային կառավարման պլանի առկայության հանգամանքից) ջրօգտագործման թույլտվությունը տրվում է 1 տարի ժամկետով, որը լիցենզիայի ստացման դեպքում համարվում է երկարաձգված՝ լիցենզիայի ժամկետին հավասար, բայց ոչ ավելի, քան 20~~

~~տարին, եթե ջրավազանային կառավարման պլաններով այլ ժամկետ սահմանված չէ, որի դեպքում ջրօգտագործման թույլտվությունը համարվում է երկարաձգված ջրավազանային կառավարման պլանով նախատեսված ժամկետով: Ջրավազանային կառավարման պլանների հաստատումից կամ դրանցում փոփոխություններ կատարելուց հետո նախկինում տրամադրված ջրօգտագործման թույլտվությունները ենթակա են վերանայման:»:~~

~~3)~~2) 7-րդ մասից հանել «, Ջրի ազգային խորհրդի դրական եզրակացության դեպքում,» բառերը:

Հոդված 7. Օրենսգրքի 66-րդ հոդվածի 6-րդ մասից հանել «Խորհրդակցելով Ջրի ազգային խորհրդի հետ՝» բառերը:

Հոդված 8. Օրենսգրքի 107-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 107. Ջրային ռեսուրսների պահպանության հսկողությունը**

Ջրային ռեսուրսների պահպանության բնագավառում ջրային ռեսուրսների օգտագործման ու պահպանության նկատմամբ պետական հսկողությունն իրականացնում են օրենքով նախատեսված լիազորված մարմինները:»:

Հոդված 9. Օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 10. Օրենսգրքի 121-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին, 3-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հոդված 12. Սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնին է վերադարձնում մինչև ջրի ազգային խորհրդի լուծարումն իր մոտ առկա ջրօգտագործման թույլտվությունների հայտերի փաթեթները՝ դրանք սահմանված կարգով գնահատելու համար: Հայտի գնահատման ժամկետը վերահաշվարկվում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնին փաթեթները վերադարձնելու օրվանից:

Comment

Formatte

Formatte